

Ուլիեն Ա. Սաֆրասյան\*

Պատմ. գիտ. դոկտոր

### ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Թուրքական երեք փաստաբղբերի համեմատական վերլուծություն

Հայոց ցեղասպանության պատմության հետազա ուսումնասիրության տեսանկյունից խիստ կարևոր է օսմանյան Թուրքիայի պետական կառավարման բարձրագույն մարմինների կողմից այդ ծանրագույն հանցագործության նախապատրաստման մասնամասների բացահայտումը: Ակնհայտ է, որ Հայոց ցեղասպանության նախապատրաստման գործընթացն ամրողացել է որոշակի պետական ծրագրի տեսքով, որտեղ արտահայտված էր ցեղասպանություն իրագործելու հանցագործությունը (intent) և նշանակած էր այն իրականացնելու միջոցները: Սովորաբար այս ծրագրի գոյությունը պահպան է գաղտնի, քանի որ այն պարունակում է տեղեկատվություն ծանրագույն պետական հանցագործության դիտավորության վերաբերյալ:

Մեր կարծիք՝ Հայոց ցեղասպանության պետական ծրագիրը գոյություն է ունեցել ոչ թե մեկ, այլ երեք փաստաբղի տեսքով: Այդ վավերագրերի համար ընդհանուր է ինչ-պես ցեղասպանության իրականացման դիտավորության, այնպես էլ հանցագործությունը իրագործելու կոնկրետ միջոցների առկայությունը:

Առաջին փաստաբութը Օսմանյան կայսրության մի խումբ դեկավար գործիչների՝ Թալեբարի դեկավարությամբ, գաղտնի հանդիպման ժամանակ ընդունված որոշումների գրառումն է և հայտնի է որպես «10 պատվիրաններ»: Հանրությանը նրա գոյության մասին հայտնի է դարձել 1919 թ. Կ. Ռուսի հայկական «Վերջին լուր» լրագրի հրապարակում, որը տպագրել է նաև փաստաբղի հայերեն թարգմանությունը: Հետագայում իր մենագրություններից մեկում այն արտատպել է հայտնի պատմաբան Լեռնի<sup>1</sup>: Ավելի ոչ քրանսահայ պատմաբան Արքուր Բեյլերյանը իր ֆրանսիական արխիվային<sup>2</sup> փաս-

\* Ուլիեն Սաֆրասյանի հոդվածը օսմանյան Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանության պետական ծրագրի խորքային ուսումնասիրություն է: Նեղինակը փաստաբղված կերպով պացուցում է, որ այդ ծրագրը իր հստակեցման հաջորդական հանդրվաններում ձևակերպվել է միանգամից երեք փաստաբղերի տեսքով: Խմբ:

<sup>1</sup> Տե՛ս առաջին անգամ 1934թ. Փարիզում տպագրված աշխատության վերահրատարակությունը. Լու, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարանութիւնը, հատ. Բ. Երևան, 1994, էջ 151–152:

<sup>2</sup> Վերջերս Հայաստանում իրատարակվեց այս արժեքավոր ժողովածուի հայերեն թարգմանությունը, որտեղ ներկայացված է ծրագրի հայերեն թարգմանությունը, տես, «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում», հատոր I, աշխատահոլությամբ Արթուր Պեյլերյանի, առաջարարմբ՝ Ժան-Բատիստ Շյուլողելի, ֆրանսերենից թարգմանեց Վարուժան Պողոսյանը, Երևան, 2005, էջ 27–28:

տարդերի ժողովածուի ներածությունում հրապարակել է փաստաթղթի ֆրանսերեն թարգմանությունը: Ամերիկահայ ցեղասպանագետ Վահագն Դադրյանը, անցյալ դարի վերջերին մանրակրկիս հետազոտելով անգլիական արխիվները, բացահայտեց մի շարք կարևոր փաստեր, որոնք կապված էին տվյալ փաստաթղթի ստեղծման ու հայտնաբերման հանգամանքների հետ<sup>3</sup>:

Մասնավորապես, պարզվեց, որ Թալեարի ղեկավարած խորհրդակցությանը ներկա են եղել անձամբ ինքը՝ ներքին գործերի նախարար և երիտրուքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Թալեարը, կենտրոնական կոմիտեի անդամներ և «Հատուկ կազմակերպության» ղեկավարներ Բեհաերդին Շաքիրը ու Նազրմը, ներքին գործերի հասարակական անվտանգության վարչության պետ Խսմահի Զանփոլադը և օսմանյան բանակի գլխավոր շտարի քաղաքական վարչության պետ գնդապետ Սեյֆին: Խորհրդակցությանը որպես քարտուղար ներկա է եղել ներքին գործերի նախարարության հետախուզական վարչության պետ գնդապետ Էսադը, որը և զրի է առել փաստաթուղթը: Ստորև ներկայացնում ենք Վ. Դադրյանի կողմից հրապարակված անգլերեն տեքստի թարգմանությունը:

1. «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կանոնակարգի 3-րդ ու 4-րդ կետերն օգտագործելով՝ փակել բոլոր հայկական միությունները և ձերքակալել բոլոր նրանց, ովքեր երբևէ գործել են կառավարության դիմ, և ուղարկել նրանց այնպիսի նահանգներ, ինչպիսիք են Բաղդադը կամ Մոսուլը, և ոչնչացնել նրանց ճանապարհին կամ տեղում:
2. Բռնագրավել գենքերը:
3. Համապատասխան ու հասուկ միջոցներով գրգռել մահմեդականների կարծիքը հայերի դեմ, այնպիսի վայրերում, ինչպիսիք են Վանը, Էրզրումը, Աղանան, որտեղ հայերը փաստորեն արժեն արժանացել են մահմեդականների ատելությանը, հրահրել կազմակերպված կոտորածներ, ինչպես ուսւները արեցին Բարփում:
4. Էրզրումի, Վանի, Մանուկեթ ու Ազիզի ու Թիթիսի նահանգներում բողնել գործադրումը ժողովրդին, ի հակառակ դրան այնպիսի տեղերում, ինչպիսիք են Աղանան, Սըլվար, Բուրսան, Իզմիրը ու Ջնյունիան, ակտիվորեն օգնել մահմեդականներին կանոնավոր գինված ուժերով (այսինքն՝ ժանդարմերիայով):
5. Իրականացնել միջոցառումներ մինչև 50 տարեկան բոլոր տղամարդկանց, հոգևորականներին և ուսուցիչներին ոչնչացնելու նպատակով՝ թողնելով աղջկներին և երեխաներին՝ մահմեդականացնելու նպատակով:
6. Տեղահանել բոլոր նրանց ընտանիքներին, ում կիաջողվի փրկվել, և իրականացնել միջոցառումներ՝ նրանց բոլոր կապերը իրենց ծննդավայրերի հետ կտրելու նպատակով:
7. Քանի որ հայ պաշտոնյաները կարող են լինել լրտեսներ, նրանց լիովին հեռացնել բոլոր պետական գերատեսչություններից կամ պաշտոններից:
8. Օգտագործելով համապատասխան միջոցներ՝ սպանել բանակում գտնվող բոլոր հայերին՝ թողնելով դրա իրականացումը զինված ուժերին:
9. Բոլոր գործողությունները ամենուրեք սկսել միաժամանակ, այդպիսով ժամանակ չքողնելով նախապատրաստելու պաշտպանական միջոցառումներ:

<sup>3</sup> V. N. Dadrian, The secret Young - Turk Ittihadist conference and the decision for the World War I Genocide of the Armenians. – Holocaust and genocide studies, 1993, Volume 7, No. 2, p. 173–201.

10. Ուշադրության դարձնել այս հրահանգների հույժ գաղտնի բնույթի վրա, դրանք չպիտի հայտնի լինեն 2-3 հոգուց ավելի մարդկանց»<sup>4</sup>:

Փաստաթղթի վրա ամիս-ամսաթիվը նշված չէ: Անգլիացի սպան, որին Էսալլը հաճախ եղանակությունը բարեկարգ է այն մոտավորապես՝ 1914ք. դեկտեմբեր – 1915ք. հունվար ամիսներով<sup>5</sup>: Ներկայումս հայտնի փաստերի լույսի ներքո այդ թվագրումը կարելի է համարել ընդունելի, քանի որ փետրվարին արդեն նշաններ կային, որ տվյալ ծրագրի կետերը սկսել են իրագործվել: Այսպես օրինակ՝ լավատեղյակ գերմանացի փոխգննապետ Շտանգեն<sup>6</sup> հայտնում էր, որ փետրվարի 10-ին «քաղաքական պատճառներով» սպանվել են օսմանյան բանկի հայազգի փոխտօնորենը և գրեթե այդ նույն օրերին՝ Երգինջանի (Երգինկայի Ռ.Ս.) հայոց եպիսկոպոսը<sup>7</sup>: Դրանից մի քանի օր հետո սկսվեց հայազգի պաշտոնյաների վտարումը պետական ծառայությունից, օսմանյան բանակի հայ շարքայինների զինարարակումը և սպաների ձերբակալումը<sup>8</sup>: Բոլոր այդ գործողությունները հիշատակված են մեր կողմից քննության առնված փաստաթղթում:

Որոշ նաևնագետների պնդմամբ՝ երիտրուրքերի կենտրոնը վերջնական որոշումը հայերի զանգվածային կոտորածը սկսելու մասին ընդունել է 1915ք. փետրվար ամավա կեսերին<sup>9</sup>: Արամ Անտոնյանի հրապարակած երիտրուրքական կուսակցության կենտ - կոմի նամակը, ուղղված Արանայի վիլայեթում կենտրոնի պատավանատու ներկայա - ցուցիչ Զեմալին, գրված է փետրվարի 18-ին և աննուղղակի հաստատում է այդ վարկա - ծրը: Այստեղ նշվում է, թե արդեն որոշում է ընդունվել բոլոր հայերին անխնան ոչնչացնել և համապատասխան հրամանները այդ մասին կառավարության կողմից շուտով կու - ղարկվեն նահանգների կուսակալներին ու բանակի հրամանատարներին<sup>10</sup>:

Այսպիսով՝ կարելի է եղանակացնել, որ մեր կողմից քննության առնված փաստաթուղթը արտացոլում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ վերջնական որոշում ընդունելու նպատակով նախապատրաստական աշխատանքի այն փուլը, երբ արդեն ստեղծվել էր կոնկրետ խնդիրների լուծման ուղղված գործողությունների ու միջոցառումների միասնական ու համակարգված ծրագիր: Կարևոր է այն հանգամանքը, որ փաստա - թուղթը ստեղծվել է ոչ թե երիտրուրքական կուսակցության կողմից, այլ արդյունք է օս - մանյան Թուրքիայի պետական՝ քաղաքացիական ու ուզմական բարձրագույն կառա - վարման օլակները ներկայացնող դեկանար գործիչների խորհրդակցության: Դա վկա - յում է, որ Հայոց ցեղասպանության նախապատրաստման գործընթացը արդեն դուրս էր եկել զուտ քաղաքական քննարկումների փուլից և թևակոխել էր գործնական ծրագրա - վորման հաճացվանը:

<sup>4</sup> V. N. Dadrian, նշվ. աշխ. էջ 174-175.

<sup>5</sup> V. N. Dadrian, նշվ. աշխ. էջ 174.

<sup>6</sup> Սա եղել է «Հայոտ կազմակերպության» դեկանարներից: Տես V. N. Dadrian, Documentation of the Armenian genocide in German and Austrian sources. New Brunswick, 1994, p. 110. Այստեղ Շտանգենի զինվորական կոչումը սիսալմամբ նշված է զնդապետ:

<sup>7</sup> Der deutsche Oberstleutnant Stange an die deutsche Militärmision in Konstantinopel, Erserum, den 23. August 1915, Geheim. - DE/PA-AA/BoKon/170, www.armenocide.net -1915-08-23-DE-013Geheim!

<sup>8</sup> Ch. J. Walker, Armenia: the survival of a Nation. London, 1983, p. 200.

<sup>9</sup> Ch. J. Walker, նշվ. աշխ.:

<sup>10</sup> Տես նամակի տեքստում Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաք փաշա, Երևան, 1990, էջ, 130:

Նրա հեղինակներից Թալեարի, Բեհաեղին Շաքիրի ու Նազրմի մեղքը Հայոց ցեղասպանության կազմակերպման և իրականացման մեջ վաղուց հայտնի ու փաստված է, և լրացուցիչ անդադարձի անհրաժեշտություն չի գգում: Զանփոլաղի հայաջինց գործունեությունը նույնպես լավ հայտնի է: Մասնավորապես, նա Կոստանդնուպոլսի հայ մտավորականության և այլ խավերի ներկայացուցիչների ձերբակալությունների ու աքսորի գլխավոր պատասխանատուն է: Նույնիսկ իր կուսակիցների շրջանում Զանփոլաղի աշխի էր ընկնում անմարդկային դաժանությամբ ու արյունաբրու հակումներով և այդ պատճառով նրան անվանում էին «մարդասպան զինվոր»<sup>11</sup>: Անզիացի սպա Էնդրյու Ռյանը, որը հարցարձնել է ձերբակալված երիտրուք պարագուխներին, խստովանում էր, որ ինքը նրա հանդիպ ավելի քիչ համակրանք էր զգում, քան թե ուրիշների<sup>12</sup>: Խսկ ահա Մուսքաֆա Քենալը ոչ միայն համակրում էր այդ «մարդասպան զինվորին», այլև բարձր էր զնահատում նրան որպես «պետական զործչի»...<sup>13</sup>

Այս հանցավոր խմբի հիմքերորդ անդամը՝ գլխավոր շտարի գնդապետ Սեյֆին, նույնպես եղել է Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուներից: Նրա դերը մինչև օրս լիովին բացահայտված չէ: Հայտնի փաստերը վկայում են, որ նա, մասնավորապես, դեկավարել է «Հատուկ կազմակերպության» շրջանակներում գործող մարդասպանների ջոկատները, այսպես կոչված՝ «ֆիլայիններին»: Այս փաստը հաստատվել է գերմանացի գնդապետ ֆոն Լուսավի կողմից<sup>14</sup>: Սակայն, շնորհիվ գաղտնի գործելու մեծ փորձի, այդ մարդասպանին հաջողվեց խոսափել ետպատերազմյան օսմանյան ռազմական դատարանի առջև կանգնելոց: Պատերազմի ավարտից հետո նա ակտիվ, սակայն հաճախ անտեսանելի գործունեություն ծավալեց քեմալական շարժման տարրեր ճակատներում: Այսպես, նա Արևմտյան ճակատում գործող գաղտնի «Համզա» խմբի դեկավարներից էր, որի նախառակի էր ապահովել հաջորդականությունը՝ երիտրուքների և քեմալականների միջև<sup>15</sup>, իսկ հետագայում Տրավիզոնում տեղակայված քեմալական բանակի ստորարաժանումներից մեկի հրամանատարն էր<sup>16</sup>:

Հանցավոր խմբի անդամներից Սեյֆին միակն էր, որը մահացավ իր մահով: Թալեարին և Բեհաեղին Շաքիրին գնդակահարեցին հայ վրիժառուները, Նազրմը և Զանփոլաղը մեղադրվեցին Մուսքաֆա Քենալի դեմ մահափորձի նախապատրաստման մեջ և ի թիվս մի շաբթ այլ նախկին երիտրուքների, 1926թ. կախաղան բարձրացվեցին:

Հանցագործները սովորաբար փորձում են քողարկել իրենց հանցագործության հետքերը: Այդպես վարվեցին նաև Մեծ եղենին հեղինակները: 1915թ. մայիսին Օսմանյան կայսրության իշխանություններն ընդունեցին մի օրենք, որի նպատակն էր «օրինական» քող ստեղծել հայ ժողովրդի կանխամտածված զանգվածային ոչնչաց-

<sup>11</sup> O. S. Kocahanoğlu, İttihat-Terraki'nin sorgulanması ve yargılanması: Meclis-i Mebusan tahlükati, Teşkilat-ı Mahsusa, Ermeni Tehcirinin iç yüzü, Divan-ı Örfi muhakemesi. İstanbul, 1998, s. 629.

<sup>12</sup> British Foreign Office dossiers on Turkish war criminals. By Vartkes Yeghiayan. La Verne, 1991, p. 52.

<sup>13</sup> O. S. Kocahanoğlu, Աշխ. աշխ., էջ 630 – 631.

<sup>14</sup> V. N. Dadrian, The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Oxford, 1995, p. 220.

<sup>15</sup> E. Şimşek, İ. Bahar, Türkiye'de istihbaratçılık ve MİT. İstanbul, 2004, s. 186 – 187.

<sup>16</sup> E. Jan Zürcher, The Unionist factor: the role of the Committee of Union and Progress in the Turkish National movement, 1905 – 1926. Leiden, 1984, p. 128.

ման՝ ցեղասպանության համար: Սակայն նրանք հաշվի չառան, որ դիտարկվելով ի թիվս այլ այշտոնական փաստաբրերի, տվյալ օրենքը փաստում է նրանց հանցավոր ծրագրերը: Դրանով իսկ՝ վերը նշված օրենքը դարձավ մարդկության պատմության ամենադաժան և ամենաարյունալի օրենքներից մեկը: Հայոց ցեղասպանության պատմության հետազոտմանը նվիրված մասնագիտական գրականության մեջ այն հաճախ հիշատակվում է որպես «Տեղահանության օրենք»<sup>17</sup>: Նրա ընդունման նախապատմությունը հետևյալն է. 1915թ. մայիսի 24-ին<sup>18</sup> Անտանտի երեք տերությունները՝ Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան հանդես եկան համատեղ Հայտարարագրով, որտեղ խստագույնս դատապարտելով հայերի զանգվածային կոտորածները և որակելով դրանք որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված թուրքիայի... նոր հանցագործություն», ընդգծեցին, որ այդ հանցագործության համար անհատապես պատասխանատու կճանաչվեն օսմանյան կառավարության անդամները<sup>19</sup>: Նույն օրը նրա ֆրանսներեն տեքստը Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության կողմից հանձնվեց «Հավա» հեռագրական գործակալությանը և անմիջապես փոխանցվեց Կոնստանդնուպոլիս ու Բեյլին: Հայտարարագրի տեքստի պաշտոնական հանձնումը օսմանյան կառավարությանը տեղի ունեցավ ավելի ուշ, երրորդ կողմի միջոցով, քանի որ դիվանագիտական հարաբերությունները Անտանտի երկրների և Թուրքիայի միջև բացակայում էին: Հրապարակված դիվանագիտական փաստաբրերը հնարավորություն են ընձեռում հետևել այդ արարողության անցած ուղին:

Սկզբում այս փաստաբրի պատճենը մայիսի 28-ին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Դեկլասեի խնդրանքով, Փարիզում ԱՄՆ դեսպան Վ. Շարվի միջոցով, փոխանցվեց Վաշինգտոն՝ պետքարտուղար Վ. Բրյանին<sup>20</sup>: Վերջինս մեկ օր անց՝ 29-ին այն հեռագրով ուղարկեց Կ.Պոլսում ԱՄՆ դեսպան Հ. Մորգենթաուին<sup>21</sup>, որն էլ հեռագյուտ հանձնել է հայտարարագիրը սաղրազամ Սահի Հալիմ փաշային: Հայտարարագրի արձագանքը օսմանյան կառավարության անդամների կողմից բավական բուռն էր: Ավստրո-Հունգարիայի դեսպան Յոհան Պալլավիշինին հայտնում էր Վիեննա, որ այն առաջարկել էր սաղրազամ (նախարարների խորհրդի նախազամ) Սահի Հալիմ փաշայի անթարույց ուժեղ զայրությը<sup>22</sup>: ԱՄՆ դեսպան Հ. Մորգենթաուն իր օրագրում նկա-

<sup>17</sup> Թուրք պատմաբանները այն անվանում են “Tehcir kanunu” (հայերեն՝ “Տեղահանության օրենք”) կամ Էլ՝ “Sevkîyat kanunu” (հայերեն՝ “Ուղարկելու օրենք»):

<sup>18</sup> Անարթերը, բացի հասուկ նշվածներից, նոր տոմարով են:

<sup>19</sup> Հայտարարագրի տեքստը տես՝ «Դեպարտամենտի ծանուցագիրը «Հավա» գործակալությանը», Հրատապ, Փարիզ, 24-ը մայիսի 1915թ. - «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայեր Ֆրանսիական արխիվներում», հատոր I, էջ 99:

<sup>20</sup> Sharp – to Secretary of State, Paris, May 28, 1915. – Documents: The State Department File. – A. Hayrapetyan, «Race Problems» and the Armenian Genocide: The State Department file. – Armenian Review, Spring 1984, Volume 37, No. 1, p. 64; Փարիզում Սահայակ Սահանգների դեսպան ապ. Վիլյամ Շարվի՝ արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին, Փարիզ, 28-ը մայիսի 1915թ. - «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայեր Ֆրանսիական արխիվներում», հատոր I, էջ 101:

<sup>21</sup> Bryan – to Amembassy, Constantinople, Washington, May 29, 1915. – Documents: The State Department file. – A. Hayrapetyan, «Race Problems» and the Armenian Genocide: The State Department file. – Armenian Review, Spring 1984, Volume 37, No. 1, p. 65.

<sup>22</sup> Pallavicini – an Baron Burian, Constantinopel, an 18. Juni 1915. – K. u K. – Dokumente: Armenien in Österreichischen Archiven (Fotokopien). Band II: 1915 – 1917. Herausgeber: Artem Ohandjanian. S. 884.

րագրում է Հայտարարագրին ծանրանալուց հետո Սահի Հալիմի վիճակը՝ որպես «չափազանց զրգությա»<sup>23</sup>:

Թուրք պատմաբանները, իրենց հերթին, Հայտարարագրից ներգործվողների թվում նշում են ներքին գործերի նախարար Թալեաք թեյի անունը, որի հրամաններով էին սկսվել և ընթացրի մեջ էին տեղահանություններն ու կոսորտածները: Վերջինիս մոտ այն, ըստ երևույթին, առաջացրել էր մտավախություն, որ այդ ոճագործությունների համար ողջ մեղքը հետագայում կրարդվի միայն իր վրա:

Փորձելով խոսափել դրանից՝ Թալեաքը նախաձեռնեց մի այնպիսի գործընթաց, որի նախատեսն էր ազատվել միայնակ պատասխանատվությունը դարձնել կոլեկտիվ՝ տարրալուծելով այն կառավարության անդամների միջև<sup>24</sup>: Հետաքրքիր է, որ այդ ոճագործը շատ լավ գիտակցում էր իր պատասխանատվությունը: Պահպանվել է Թալեաքի բացառիկ խոս - տովանությունը, որի մասին իր հուշագրություններում հիշատակում է նրա մերձավոր ընկեր, Օսմանյան կայսրության և «Սիոնյուն ու առաջադիմություն» կուսակցության ղեկավար գործիչներից Հալիլը: Համաձայն վերջինիս՝ Թալեաքը, նկատի ունենալով հայերի տեղահանությունը, նրան խոստովանել է, որ ինքն է կայացրել որոշումը տեղա - հանության մասին<sup>25</sup>:

Ուստի Թալեաքի նախաձեռնությամբ թուրքական ղեկավարությունն արագ ընդունեց մի շարք որոշումներ, որոնք մեկ շարաթվա ընթացքում հանգեցրին, ինչպես ցույց կտրվի ստորև, «Տեղահանության օրենքի» հրապարակմանը:

Թուրքիայում հրատարակած փաստարդերը փաստում են, որ Հայտարարագրի հրապարակումից մեկ օր հետո՝ մայիսի 26-ին, բանակի գլխավոր հրամանատարությունը դիմեց ներքին գործերի նախարարությանը՝ առաջարկելով սկսել հայերի տեղահանությունը «Արևելյան վիլայեթներից, ԶԵյրունից և դրանց նման հայաշատ վայրերից»<sup>26</sup>:

Ուշգրավ է, որ թուրք պատմաբանները խոսափում են հրապարակել այս կարևոր վավերագրի ինչպես ֆոտոպատճենը, այնպես էլ օսմաններն տեքստը, սահմանափակվելով միայն նրա ակնհայտորեն աղճատված տարբերակով, որը տեղադրել է իր մենագրությունում Հայոց ցեղասպանության իրողությունը կեղծող թուրքական պաշտոնական պատմագրության «հենապյուներից» մեկը՝ պաշտօնաբող դեսպան Քյամուրան Գյուրյունը<sup>27</sup>: Մինչդեռ թվում էր, թե ովյալ փաստարդի հրապարակումը կարևոր ներդրում պիտի լիներ հայերի տեղահանությունը որպես զրոտ ռազմական անհրաժեշտությունից բխող միջոցառում ներկայացնող՝ թուրքական պաշտոնական վարկածի հաս - տատման գործում: Այս հանգամանքը մտածել է տախի, որ Ք. Գյուրյունը ոչ միայն լրիվ չի հրապարակել փաստարդությը, այլ նաև կեղծել է այն: Վերջին ներադրությունը հաս -

<sup>23</sup> June 7, Monday. - [Henry Morgenthau], United States Diplomacy on the Bosphorus: The Diaries of Ambassador Morgenthau 1913 – 1916. Compiled with an Introduction by Ara Sarafian. Princeton and London, 2004, p. 249.

<sup>24</sup> St'u ophնակ, Y. H. Bayur, Türk İnkılabı tarihi. Cilt: III: 1914 -1918: Genel Savaşı, Bölüm III: 1915 – 1917 yurşumaları ve bunların siyaset tevkileri. Ankara, 1983, s. 39; Y. Halaçoğlu, Die Armenierfrage. Klagenfurt, 2006, S. 66.

<sup>25</sup> St'u [Halil Menteşe], Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin anıları. Giriş: İsmail Arar. İstanbul, 1986, s. 216.

<sup>26</sup> St'u այդ փաստարդի տեքստում, որը հրատարակել է թուրք պատմաբան Ք. Գյուրյունը. K. Gürün, Ermeni dosyası. İlkinci Baskı. Ankara, 1983, s. 213.

<sup>27</sup> St'u ophնակ, Y. Halaçoğlu, Die Armenierfrage. Klagenfurt, 2006, S. կամ հ' Y. Ercan, Ermeniler ve Ermeni Sorunu. – Yeni Türkiye, 2001, ocak-şubat, yil 7, sayı 37: Ermeni Sorunu özel sayısı I, s. 48 - 49.

տատվում է նրանով, որ փաստաբութը առաջարկում է սկսել Զեյթունի հայերի տեղա - հանուրյունը, մինչդեռ նրանց տեղահանուրյունը սկսվել էր Թալեարի հրամաններով՝ դեռևս մարտի վերջերին, շարունակվել է ապրիլ ամսվա ընթացքում, և Զեյթունում արդեն տեղակայվել էին բուրքական կանոնավոր գորքեր: Դա վկայում է, որ զիսավոր հրամանատարության հեղինակած՝ վերը նշված փաստաբութը իրականում գրվել է ավելի վաղ, քան փորձում է ցոյց տալ Ք.Գյուրյունը, հավանաբար՝ 1915թ. ապրիլ-մայիսի սկիզբին: Այս կեղծիքի պատճառը, թերևս, այն է, որ փաստաբութում հղում կա տեղահանուրյան մասին ընդունված «բանավոր որոշման» վրա<sup>28</sup>: «Վրիպակը», մեր կարծիքով, կատարվել է իրականում Էնվերի կողմից՝ միտունավոր, քանի որ դրանով ռազմական նախարարությունը հնարավորություն էր ստանում խուսափել տեղահանուրյունը նախաձեռնողի պատասխանատվորյունից:

Ի պատասխան այդ գորության՝ Թալեարը ներքին գործերի նախարարության անունից գաղտնի գեկուցագրով դիմում է կառավարությանը՝ պահանջելով տեղահանել պատերազմական շրջանների հայ ազգաբնակչությանը<sup>29</sup>: Այս փաստաբութը, շնայած այն հանգամանքին, որ պարունակում է կեղծիքների ու ստերի մի ամբողջ շարան, միաժամանակ հնարավորություն է տալիս վերահաստատելու բուրքական իշխանությունների ցեղասպանական դիտավորությունը: Հայկազնն Ղազարյանի թարգմանությամբ այն ձևակերպված է այսպես. «Պետության կենսական ջանքերու կարգին գործ մըն է այս մտատանջուրյունը<sup>30</sup>, զայն հիմնական կերպով լուծելու, վերջացնելու և ամրողապես ջնջելու համար»: Այս մասին նիշոցներ պատրաստելու և պատրաստ գտնվելու մասին խորհած և նկատողության առած ենք»<sup>32</sup>: Վերջին նախարարությունը կարելի է մեկ նարբանել որպես անդրադարձ մեզ լավ ծանոթ «10 պատվիրաններին»:

Թուրքական իշխանությունները այնքան էին շտապում, որ խախտեցին օրենքների ընդունման կարգը, ինչը վկայում է նրանց շրջանում տիրող խուճապի մասին: Առանց կառավարության նիստ իրավիրելու, Թալեարի գեկուցագիրը բնարկելու և կառավարության համապատասխան որոշում ընդունելու, արդեն հաջորդ օրը՝ մայիսի 27-ին, հայցեաւ ընդունվում և հունիսի 1-ին իրապարակվում ու անմիջապես ուժի մեջ է մտնում «Պատերազմի ժամանակ կառավարության գործունեության դեմ դուրս եկողների համար ռազմական տեսանկյունից առնելիք նիշոցների մասին ժամանակավոր օրենք» վերտառությամբ և սուլթանի ու ռազմական նախարար Էնվերի ստորագրությամբ օրենք<sup>33</sup>: Ինչպես նշել էինք, այն ընդունված է անվանել նաև «Տեղահանության օրենք»:

Նախքան «Տեղահանության օրենքի» իրապարակումը, մայիսի 30-ին տեղի է ունենում կառավարության նիստ: Այն քննում է Թալեարի գեկուցագիրը և ընդունում է Որո-

<sup>28</sup> K. Gürün, Ermeni dosyası. İkinci Baskı. Ankara, 1983, s. 213.

<sup>29</sup> Այդ գաղտնի գեկուցագրի տեքստը՝ հայերն բարգմանությամբ, առաջին անգամ իրատարակվել է ցեղասպանության վերապող, խորքային հետազոտող Ջայկազն Ղազարյանը: Տե՛ս Յ. Գ. Ղազարյան, Ցեղասպան թուրքը, Պետք, 1968, էջ 324 – 328:

<sup>30</sup> Ինչպես երևում է փաստաբութի համատեքստից, Թալեարի «մտատանջուրյունը» հայ ժողովորի ձգումն էր՝ իրականացնել բարենորոգումներ Միմանյան Յայաստամուն:

<sup>31</sup> Թարգմանության հեղինակը, հաշվի առնելով սույն պարերության կարևորությունը, բերում է թուրքերն արտահայտություն՝ «քյուլիյեն իզալեսի»:

<sup>32</sup> Յ. Գ. Ղազարեան, Եշվ. աշխ., էջ 325:

<sup>33</sup> Տեքստը տե՛ս 'Vakt-i seferde icraat-i Hükümete karşı gelenler için cihet-i askeriye ittihaz olunacak tedabir hakkında kanun-i muvakkat. - Takvim-i Vekâyi', 18 Recep 1333 / 19 Mayıs 1331, 7. sene, nr. 2189.

շում՝ սկսել տեղահանությունը: Նրա տեքստը հրատարակված է<sup>34</sup>: Այն վերնագրված է «Նախարարների խորհրդի քննարկումների վերաբերյալ արձանագրություն» և բաղկացած է երկու մասից՝ «Համառոտ նկարագրություն»<sup>35</sup> և «Որոշում»: Փաստաթրի տակ ստորագրել են օսմանյան կառավարության մի շարք անդամներ: Մեզ հաջողվել է վերծանել սաղմազամ Սայիդ Հաջի փաշայի, Էնվերի, Թալեբարի, Նեսիմի ստորագրությունները: «Որոշում» հատվածում նույնպես առկա է արտահայտություն, որը բացահայտում է օսմանյան կառավարության ցեղասպանական դիտավորությունը: Այսուղեւ նշված է հայկական շարժման «լիովին ոչնչացման ու վերացման անհրաժեշտությունը» («imhâ ve izâlesi kat'iyen muktezi»)<sup>36</sup>: Այդպիսով, Թալեբարի առաջարկը արժանանում է կառավարության հավանությանը՝ ստանալով կառավարական որոշման տեսք, որտեղ պարզորդ արտահայտված է տեղահանության պատրիարքական հայ ժողովրդին բնաշնչելու դիտավորությունը: Ուրեմն՝ Օսմանյան կառավարության Որոշումը երկրորդ կարևոր փաստարդն է, որը մաս է կազմում Հայոց ցեղասպանության պետական ծրագրի:

Անդրադամանք «Տեղահանության օրենքին»: Ցայսօր նրա և բովանդակությամ, և՝ հրապարակման առանձնահատկությունների հետ կապված շատ հանգանանքներ ինչպես մեզանում, այնպես էլ արտերկրուտ մնում են չպարզաբանված՝ նպաստելով իրարամերժ մոտեցումների դրսուրմանը:

Վիճակարույց խնդիրներից է, օրինակ, օրենքի ընդունման և հրապարակման ամսաթիվի հարցը: Նոյնիսկ այնպիսի ճանաչված ցեղասպանագետ, ինչպիսին Վահագն Դարրյանն է, իր երկու իիմնարար աշխատություններում նշում է այդ օրենքի հրապարակման երկու տարբեր ամսաթվեր՝ երկուսն էլ սխալ: Նրանցից առաջինում, որը հրատարակվել է 1995թ., նշված է 1915թ. մայիսի 26-ը<sup>37</sup> (այսուղեւ և այսուհետ հոդվածի բոլոր ամսաթվերը, բացի հասուն նշվածներից, նոր սումարով են): Չորս տարի հետո լրիս տեսած նրա գրչին պատկանող մեկ այլ գրքում կարդում ենք, որ այդ օրենքը մամուլում հրապարակվել է 1915թ. մայիսի 27-ին<sup>38</sup>:

Մինչդեռ, բոլոքական պաշտոնական վավերագրերը փաստում են, որ առաջին ամսաթիվը վերաբերում է ներքին գործերի նախարար Թալեբարի գաղտնի գեկուցագրին, որին արդեն անդրադարձել ենք, իսկ երկրորդը օրենքի ընդունման ամսաթիվն է, այլ ոչ թե մամուլում հրապարակման, ինչը տեղի է ունեցել հինգ օր ավելի ուշ, 1915թ. հունիսի 1-ին՝ պաշտոնարերը «Թարվին-ի վաքայի»-ի առաջին էջին: Այս ճշտումը կարևոր է, քանի որ, համաձայն օրենքի 3-րդ հոդվածի, այն գործողության մեջ պիտի մտներ հրապարակման օրից:

Հայոց ցեղասպանության պատմության հետազոտմանը նվիրված մի շարք այլ աշխատություններում նույնպես կարելի է հանդիպել վերը նշված սխալին: Նշենք, օրինակ, մեզանում քաջ հայտնի Հայկազոն Ղազարյանի և Լևոն Վարդանի մենագրու-

<sup>34</sup> Meclis-i Vükelâ Müzâkerâtına Mahsûs Zabıtnâme: Hülasâ-i me’âlî, 17 Mayıs 1331. - BOA. Meclis-i Vükelâ Mazbatası, 198/163. - <http://www.devletarsivleri.gov.tr/kitap/pdf/2/17.pdf>

<sup>35</sup> Պետք է հասկանալ, ըստ երևույթին, «խնդրի քննարկման համառոտ նկարագրություն»:

<sup>36</sup> Meclis-i Vükelâ Müzâkerâtına Mahsûs Zabıtnâme: Hülasâ-i me’âlî, 17 Mayıs 1331. - BOA. Meclis-i Vükelâ Mazbatası, 198/163. - <http://www.devletarsivleri.gov.tr/kitap/pdf/2/17.pdf>

<sup>37</sup> V. N. Dadrian, The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Providence, Oxford, 1995, p. 400.

<sup>38</sup> V. N. Dadrian, Warrant for genocide: key elements of Turko – Armenian conflict. New Brunswick, 1999, p. 123.

բյունները, որտեղ նույնպես առկա է շփոթմունք՝ օրենքի ընդունման ու մամուլում հրապարակման ամսաթվերի միջև<sup>39</sup>:

Ամսաթվերի մեջ շփոթվում են նաև բուրք որոշ պատմաբաններ: Այսպես, օրինակ, Մեծ-մետ Հոգաողուն սխալմամբ գրում է, թե օրենքը սկսել է գործել 1331թ. մայիսի 14-ին (համաձայն Օսմանյան կայսրության պաշտոնական գրագրության մեջ օգտագործված ոռումի օրացուցային համակարգի)<sup>40</sup>, ինչը եկաղական օրացուցային համակարգի նոր տոմարով համապատասխանում է 1915թ. մայիսի 27-ին: Սակայն օրենքը պաշտոնապես գործողության մեջ է դրվել է մամուլում հրապարակման օրից, այսինքն՝ 1915թ. հունիսի 1-ից:

Օրենքի ընդունման ու հրապարակման ամսաթվերի հետ կապված սխալ առկա է նաև բուրք պատմաբան Խսմայիլ Համբ Դամիշմենի մոտ, որի «Օսմանյան պատմության բացատրական տարեգրություն» վերտառությամբ քառահատորյակը տասնամյակներ շարունակ հանդիսանում էր օսմանազետների սեղանի գիրքը: Այդ աշխատության շորորդ հատորում հետինակը գրում է, թե «Տեղահանության օրենքը» հրապարակվել է 1915 թ. մայիսի 27-ին՝ շփոթելով այդ ամսաթիվը օրենքի ընդունման ամսաթվի հետ<sup>41</sup>:

Մեկ այլ շփոթմունքի ենք հանդիպում ԱՄՆ-ում բնակվող բուրք պատմաբան Թաներ Աքչամի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված գրքերից մեկում, որտեղ նա, ճիշտ նշելով «Տեղահանության օրենքի» ընդունման ու հրապարակման ամսաթվերը (մայիսի 27 և հունիսի 1), գրում է, որ դրանք վերաբերում են կառավարության որոշմանը՝ տեղահանություն սկսելու վերաբերյալ: Ակնհայտ է, որ նա նույնացնում է «Տեղահանության օրենքը» և հայերի տեղահանությունը սկսելու վերաբերյալ կառավարության որոշումը, ինչը սխալ է<sup>42</sup>: Կառավարության «Տեղահանության որոշումը», ինչպես արդեն նշվել է, ընդունվել է նախարարների խորհրդի մայիսի 30-ին տեղի ունեցած նիստի ընթացքում, այսինքն՝ «Տեղահանության օրենքի» ընդունմամբ երեք օր անց: Վելի ուշ լույս տեսած իր գրքերից մեկում Թ. Աքչամը, ցուցաբերելով պարտաճանաչ մոտեցում, ուղղել է իր վերը նշված սխալը<sup>43</sup>:

Ծշգուտնան կարիք ունի նաև օրենքի բուն բովանդակությունը, մասնավորապես նրա հոդվածների թիվը: Այդ խնդրի շուրջ պատմագրության մեջ առկա են տարակարծություններ: Սակավարիվ են աշխատությունները, որտեղ նշվում է օրենքի բովանդակությունը կազմող հոդվածների ստույգ թիվը՝ չորս: Դրանցից արժե հիշատակել ամերիկահայ Գրիկերի կողմից հրատարակած ուշագրավ գիրքը<sup>44</sup>: Գրիկերը, թերևս, այն եզակի հերինակներից է, որը, ըստ ամենայնի, ծանոթ է եղել «Թաքվիմ-ի վաքայի» պաշտոնական լրագրում տպագրված «Տեղահանության օրենքի» տարբերակին և այդ պատճառով չի սխալվում, եթե անդրադառնում է օրենքի բովանդակության, ինչպես նաև ընդունման ու հրապարակման ամսաթվերի հետ կապված հանգամանքներին<sup>45</sup>: Նույնը կարելի է ասել նաև ճանաչված բուրք պատմաբան Թաքեր Թունայայի մասին<sup>46</sup>:

<sup>39</sup> Յ. Գ. Ղազարեան, նշվ. աշխ., էջ 69, 328 և L. Վարդան, Յայկական տասնինմարտ եւ հայերու լրեալ գոյեքը (Քննական ակնարկ ըստ թթավական վաւերագիրներու), Պեյրութ, 1970, էջ 117:

<sup>40</sup> M. Hocaoğlu, Tarihte Ermeni mezalimi ve Ermeniler, İstanbul, 1976, s. 645.

<sup>41</sup> İ. H. Danişmend, İzahî osmanlı tarihi kronolojisi. Cilt: 4: M. 1703 – 1924 H. 1115 – 1342. İstanbul, 1955, s. 428.

<sup>42</sup> T. Akçam, Türk ulusal kimliği ve Ermeni sorunu. 2. baskı. İstanbul, 1993, s. 109.

<sup>43</sup> T. Akçam, İnsan hakları ve Ermeni Sorunu: İttihat ve Terakkî'den Kurtuluş Savaşına. 2. Baskı. Ankara, 2002, s. 317 - 318.

<sup>44</sup> Եղղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, պատրաստեց Գրիկեր, Նիւ Եռք, 1980:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ. 37 - 38:

<sup>46</sup> T. Z. Tunaya, Türkiye'de siyasal partiler. Cilt I: İlkinci Meşrutiyet dönemi, 1908 - 1918. Genişletilmiş ikinci baskı. İstanbul, 1988, s. 580.

Հիմնականում թուրք հեղինակները նախընտրում են ընդգծել, որ «Տեղահանության օրենքը» ունեցել է երեք հոդված: Նրանք նույնապես չեն նշում, թե ո՞ն սսորագրություններն են դրված օրենքի տակ: Ժամանակին այդպես են վարպետ, օրինակ, Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական պաշտոնական ժխտողական հայեցակարգի հենասյուները հանդիսացող Էսար Ուրասը<sup>47</sup> և Քյամուրան Գյուրյունը<sup>48</sup>:

Հետազայում թուրքիայում մեծ հեղինակություն վայելող այդ պատմաբանների կողմից շրջանառության մեջ դրված օրենքի աղճատված տարրերակը անվերապահորեն ընդունվել է թուրք մի շարք այլ հեղինակների կողմից ու տեղ գտել նրանց ինչպես գիտական աշխատություններում<sup>49</sup>, այնպես էլ հրապարակախոսական հոդվածներում<sup>50</sup>: Նույնիսկ այնպիսի փորձառու պատմաբան, ինչպիսին Բիլյալ Շիմշիրն է, որն այսօր թուրքիայում համարվում է հայկական հարցի լավագույն «ուսումնասիրողներից» մեկը, գտնելելով «Տեղահանության օրենքի» տեքստը՝ նույնպես անտեսում է այն փաստը, որ օրենքի պաշտոնապես հրատարակված տեքստը ունեցել է չորս հոդված և սահմանափակվում է միայն երեքի մեջքերումով<sup>51</sup>:

Հետևելով իրենց «հոգևոր հայրերի» օրինակին՝ թուրք պատմաբանների երիտասարդ սերնդի ներկայացուցիչները շարունակում են քողարկել «Տեղահանության օրենքի» բուն բովանդակությունը: Այսպես, օրինակ, Սովեյյան Դեմիրելի անվան համալսարանի դասախոս Հասան Բարաջանը, դիմելով «գիտական» աճպարարության, կիրառում է հետևյալ հնարքը. Իրելով «Թարվիմ-ի վարպայի»-ի 1915թ. հունիսի 1-ի համարում հրատարակված օրենքի տեքստը, նա մեջ է բերում օրենքի միայն երկու հոդվածները, երկրորդ հոդվածին կցելով օրենքի չորրորդ հոդվածի բովանդակությունը և ընդհանրապես անտեսելով երրորդի գոյությունը<sup>52</sup>: Վարպետով այլկերպ՝ նա, թերևս, ենթադրում էր, որ «Թարվիմ-ի վարպայի»-ի 1915թ. հունիսի 1-ի համարը չի կարող հասու լինել նաև՝ ոչ թուրք մասնագետներին...

Իսկ վերջերս պաշտոնական թուրքական պատմագրության մեջ այդ տիսրահոչակ օրենքի վերաբերյալ դրսուրվում է նոր մոտեցում. նրա գոյությունը ընդհանրապես անտեսվում է: Այդպես է վարպետ, օրինակ, Թուրքական պատմագիտական ընկերության (ԹՊՀ) կողմից հրատարակված «Հայեր. աքսոր և վերաբնակեցում» գրքի հեղինակների խոսքը: Այստեղ միայն նշված է, որ մեր՝ վերևում արդեն հիշատակված նախարարների խորհրդի մայիսի 30-ի Որոշումը «հավանություն տվեց ներքին գործերի նախարարության որոշմանը և արդեն ընթացքի մեջ գտնվող նրա իրագործմանը»<sup>53</sup>:

Թերևս, հեղինակները, որոնց թվում է նաև Հայոց ցեղասպանության պատմության թուրք «հետազոտողների» ներկա սերնդի «առաջնորդ» և ԹՊՀ նախագահ Յու. Հայաչյանը, այդպիսով ուղղակի փորձել են խուսափել «Տեղահանության օրենքի» բովան-

<sup>47</sup> E. Uras, Tarihte Ermeniler ve Ermeni Meselsi. Yeniden gözden geçirilmiş ve genişletilmiş 2. Baskı. İstanbul, 1987, s. 605.

<sup>48</sup> K. Gürün, Ermeni dosyası. İkinci Baskı. Ankara, 1983, s. 214.

<sup>49</sup> St'u, օրինակ, Y. Ercan, Ermeniler ve Ermeni Sorunu. – Yeni Türkiye, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37: Ermeni Sorunu özel sayısı I, s. 49.

<sup>50</sup> St'u, օրինակ, S. Kaplan, 1915'teki trajedi işte bu tehcir kanunuyla başladı. - Hürriyet, mart 3, 2005.

<sup>51</sup> B. N. Şimşir, Ermeni Meselesi: 1774 – 2005. Üçüncü basım. Ankara, 2006, s. 299.

<sup>52</sup> H. Babacan, Ermeni Tehciri hakkında bir değerlendirme. - Yeni Türkiye, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37: Ermeni Sorunu özel sayısı I, s. 410.

<sup>53</sup> H. Özdemir, K. Çiçek, Ö. Turan, R. Çalık, Y. Halaçoğlu, Ermeniler: sürgün ve göç. İkinci Basım. Ankara, 2004, s. 64.

դակուրյան մասին կարծիք հայտնելուց: Ավելորդ չէ նշել, որ պրոֆեսոր Յու. Հալաջող-լուն իր գրքի «Ներածությունում» պնդում է, որ այն իհմնված է «գիտական չափանիշների և պատմության ուսումնասիրման սկզբունքի վրա»<sup>54</sup>: Դժվար է հասկանալ, թե ինչ-պե՞ս կարելի է համադրել Հայոց ցեղասպանության վերաբերյալ կարևոր պաշտոնական վավերագիր գոյուրյան անտեսումը «գիտական չափանիշների» հետ:

Ուշագրավ է, որ շանցած երկու տարի, արդեն միայնակ հեղինակած իր մեկ այլ գրքում Յու. Հալաջողուն ոչ միայն հիշատակում է «Տեղահանության օրենքը», այլև վերաբարադրում է նրա բովանդակությունը՝ հետևելով, իհարկե, բուրքական պատմագրության համար արդեն ավանդույթ դարձած մոտեցմանը, համաձայն որի այդ օրենքի իրականացման համար պատասխանատու անձի՝ Էնվերի անունը չի հիշատակվում<sup>55</sup>: Ի տարբերություն իր շատ գործընկերների, օրենքի նաև իսկ խոսելիս, Յու. Հալաջողուն հղում է ոչ միայն ավագ սերնդի պատմաբաններ Յուսուֆ Հիրմեր Բայուրի<sup>56</sup> և Ջամուրան Գյուրյունի<sup>57</sup> աշխատությունները, այլև հիշատակում է պաշտոնաքերը «Թաքվիմի վաքայի»-ի 1915թ. հունիսի 1-ի համարը, որտեղ տպագրված է «Տեղահանության օրենքը»: Սակայն այս դեպքում ևս խուսափում է զերեւ, թե ում վրա է դրվել անձնական պատասխանատվությունը նրա իրագործման համար, սահմանափակվելով բավական մշուշու նշումով, որ այդ օրենքի ընդունումը հայերի «վերաբնակեցումը փոխանցվեց ներքին գործերի նախարարությունից ռազմական իշխանություններին»<sup>58</sup>:

Թուրքական աղբյունների հետազոտման արդյունքում հնարավոր եղավ հայտնաբերել ժամանակակից բուրք հեղինակների կեղծիքների կայուն «ավանդույթի» սկզբանաբարյուրը: Պարզվում է, որ նրա սկիզբը դրվել է դեռևս 1916 թ.: Այդ ժամանակ, այսինքն՝ երր դեռ շարունակվում էր Հայոց ցեղասպանության գործընթացը, օսմանյան կառավարությունը, ճգուտելով մոլորդության մեջ զցել համաշխարհային հանրությանը և խուսափել հնարավոր պատասխանատվությունից, սկզբում բուրքերն, հետազոտման նաև՝ եվրոպական լեզուներով իրատարակեց մի ստվարածավալ գիրք-տեղեկագիր, որտեղ լկահարար կեղծվում էր իրականությունը և փորձ էր արվում Մեծ եղենի պատասխանատվությունը բարդել հենց հայերի վրա: Այստեղ բերված էր «Տեղահանության օրենքի» աղճատված, երեք հոդվածից բաղկացած տեքստը, բացակայում էին վերջին՝ չորրորդ հոդվածը, ինչպես նաև օրենքի վերջին պարբերությունը: Չեն նշել նաև օրենքի տակ իրենց ստորագրությունները դնողների անունները<sup>60</sup>: Եվ դա այն դեպքում, երբ նախորդ տարում՝ 1915 թվականին, կառավարական պաշտոնաքերում տպագրված տեքստում այդ բոլորն առկա էր:

Նշենք նաև, որ այդ շրջանում օսմանյան կառավարությանը հաջողվեց հասնել իր նապատակին: Եվ ժամանակակիցներից, և՛ հետազու սերունդների պատմաբաններից շատերը «Տեղահանության օրենքի» տեքստի համար որպես հիմք ընդունում էին կառա-

<sup>54</sup> H. H. Özdemir, K. Çiçek, Ö. Turan, R. Çalık, Y. Halaçoğlu, Ermeniler: sürgün ve göç. İkinci Basım. Ankara, 2004, s. VII.

<sup>55</sup> Y. Halaçoğlu, Die Armenierfrage. Klagenfurt, 2006, S. 68.

<sup>56</sup> Y. H. Bayur, Türk İnkılâbı tarihi. Cilt: III, Kısım 3. Ankara, 1983.

<sup>57</sup> K. Gürün, Ermeni dosyası. İkinci Baskı. Ankara, 1983.

<sup>58</sup> Y. Halaçoğlu, Die Armenierfrage. Klagenfurt, 2006, S. 68.

<sup>59</sup> Ermeni komitelerinin âmâl-i ve harekât-i ihtilâliyesi ilân-i meşrutiyetten evvel ve sonra. İstanbul, 1332, s. 237 - 238.

<sup>60</sup> Deutschland und Armenien 1914 - 1918: Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, S. 78.

վարական գիրք-տեղեկագրում զետեղված տարբերակը, այլ ոչ թե պաշտոնաթերթի տեքստը: Այդպես էր վարչել, օրինակ, Հայոց ցեղապահնության ականատես ու հետազոտող Յոհաննես Լեփսիոսը, որը իր կազմած գերմանական դիվանագիտական վավերագրերի ժողովածուի մեջ ընդգրկել էր օրենքի տեքստի այն տարբերակը, որը տեղ էր գտել կառավարական գիրք-տեղեկագրի ֆրանսերեն հրատարակությունում: Հայկազն Դաշտայանը տպագրել է օրենքի երեք հոդվածների հայերեն թարգմանությունը՝ նոյնապես հիմք ընդունելով նրա այն տարբերակը, որը տեղ է գտել վերևում հիշատակված պաշտոնական գիրք-տեղեկագրում, սակայն, ի տարբերություն Յո. Լեփսիոսի, նա օգտվել է այդ գրքի բուրքերեն հրատարակությունից<sup>61</sup>:

Հարց է առաջանում. ինչո՞վ էր պայմանավորված Օսմանյան կայսրության իշխանությունների նման նոտեցումը: Շրջանառության մեջ գտնվող պաշտոնական օսմանյան վավերագրերը հնարավորություն չեն տալիս հստակ պատասխանել այդ հարցին: Թերևս, կարելի է ներառել, որ պատճառը օսմանյան թուրքիայի այդ տարիների կառավարող Վերնախավի, մասնավորաբար Էնվերի փաշայի ձգտումն էր՝ ամեն կերպ բռնականացնելու հայերի տեղահանության համար:

Ինչպես արդյուն նշել ենք, հայ ժողովրդի զանգվածային տեղահանությունը ակսվել էր նախքան օրենքի ընդունումն ու հրապարակումը, և այն իրականացվում էր ներքին գործերի նախարար ու երիտրուրքական կուսակցության փաստացի առաջնորդ Թալեբարի նախաձեռնությամբ ու դեկավարությամբ: Հետաքրքիր է, որ իր հուշագրություններում Թալեբար, ամեն կերպ փորձելով խոսափել պատասխանատվորությունից, շեշտում է, որ բանակի դեկավարությունը, համարելով, որ հայ ազգաքնակշուրյունը վտանգ է ներկայացնում ու ազմական տեսակետից, պահանջում էր սկսել հայերի տեղահանությունը, իսկ ինքը դեմ էր դրան, ինչ համար իր գործընկերների կողմից մեղադրվում էր հայրենիքին անհավատարիմ լինելու մեջ<sup>62</sup>: Նրա ներկայացմամբ, քանի որ դրությունը գնալով ծանրանում էր, իսկ բանակն էլ հնարավորություն ուներ ձեռնարկել «անհրաժեշտ միջոցներ» նույնիսկ առանց համապատասխան օրենքի, ապա այլև «օգուտ չուներ» ձգձգել տեղահանության մասին օրենքի ընդունումը<sup>63</sup>:

Թալեբարը պնդում է, որ բանակի Գլխավոր շտաբն է նախապատրաստել «Տեղահանության օրենքի» տեքստը և ուղարկել այն կառավարություն<sup>64</sup>: Սակայն նրա շարադրանքից պարզ չի դառնում, թե որքանով է այն հիմք ծառայել օրենքի վերջնական տարբերակի համար: Այդ հարցին պատասխան չեն տալիս նաև Վերջին շրջանում թուրքիայում հրապարակված օսմանյան պաշտոնական վավերագրերը:

<sup>61</sup> Յ. Ղազարեանի գրքում օրենքի թարգմանությունը զետեղված է Երկու անգամ, տե՛ս, Յ. Գ. Ղազարեան, նշվ. աշխ., էջ 69 - 70 և էջ 180 - 181: Այդ երկու տեքստերի միջև առկա են տարբերություններ:

<sup>62</sup> [Talât Paşa], Talât Paşa'nın hâtilarları: Sadırazam Talât Paşa'nın tarihin bir çok gizli taraflarını aydınlatan şimdidey kadar neşredilmemiş şahsi notları. İstanbul, 1946, s.63 - 65. Պետք է հաշվի առնել նաև այն հանգամաքը, որ Թալեբարի հուշագրությունները հրատարակվել են փոփոխված ու խմբաքած տեքստով, ինչը ժամանակին ընդունել է նույնիսկ Յուսուֆ Քիրմեր Բայուլը: Տես. Y. H. Bayur, Ermeni Meselesi, kaynaklar, II: hâtilalar. - Cumhuriyet, Salı / Cuma Kitabı, 26 haziran 1998.

<sup>63</sup> [Talât Paşa], Talât Paşa'nın hâtilarları: Sadırazam Talât Paşa'nın tarihin bir çok gizli taraflarını aydınlatan şimdidey kadar neşredilmemiş şahsi notları. İstanbul, 1946, s. 65.

<sup>64</sup> [Talât Paşa], Talât Paşa'nın hâtilarları: Sadırazam Talât Paşa'nın tarihin bir çok gizli taraflarını aydınlatan şimdidey kadar neşredilmemiş şahsi notları. İstanbul, 1946, s. 63 - 64.

Ուշագրավ է այն փաստը, որ մինչ օրս չի հրապարակվել օսմանյան կառավարության որևէ պաշտոնական վավերագիր՝ կապված «Տեղահանության օրենքի» հետ: Թուրք պատմաբանների կողմից շրջանառության մեջ է դրվել միայն պաշտոնաբերք «Թաքվիմ-ի վարայի»-ի 1915թ. հունիսի 1-ի համարի առաջին էջի ֆոտոպատճենը, որտեղ գետեղված է սույն օրենքը: Թե որքանով է այն համապատասխանում կառավարության կողմից վերջնականորեն ընդունված տարբերակին, դժվար է ասել: Համենայն դեպքում, Հայկազն Ղազարյանը գրում է, թե իրականում օրենքը ունեցել է ուր հոդված, որոնցից հինգը գաղտնի է պահպել<sup>65</sup>: Այդ հարցը կարիք ունի հետագա հետազոտման:

Նշված անձտուրյուններին ու շփորձունքներին վերջ տալու լավագույն միջոցը «Տեղահանության օրենքի» տեքստի պաշտոնական տարբերակի թարգմանաբար ներկայացումն է, ինչը հնարավոր եղավ իրականացնել միայն՝ ձեռքի տակ ունենալով պաշտոնաբերք «Թաքվիմ-ի վարայի»-ի 1915 թ. հունիսի 1-ի համարի ֆոտոպատճենը: Ցայսօր գիտական շրջանառության մեջ գտնվող օրենքի հայերեն թարգմանությունները կատարված են նրա աղճատված տարբերակներից<sup>66</sup>:

«Տեղահանության օրենքի» որպես սույն իրապարակման հավելված ներկայացվող պաշտոնական տարբերակը փաստում է, որ օրենքը ունեցել է չորս հոդված, ընդունվել է 1915 թ. մայիսի 27-ին, գործողության մեջ է մտել 1915 թ. հունիսի 1-ին, և նրա իրագործման պատասխանատվությունը դրվել է անձամբ Էնվերի վրա: Օրենքի տակ դրված են սուլթան Սեհմեն Ռեշադ 5-րդի, սաղրազամ (Նախարարների խորհրդի նախագահ) Մեհմետ Սահր Հայիմ փաշայի և գլխավոր իրամանատարի տեղակալ ու ուսազմական նախարար Էնվերի անունները:

Ստորև ներկայացնում ենք օրենքի իրական տեքստը.

-Հոդված 1. Պատերազմի ժամանակ բանակների, գրուարանակների իրամանատարները և նրանց տեղակալները և առանձին դիրքերի իրամանատարները, բնակչության կողմից կառավարության իրամանների, երկրի պաշտպանության ու հանգստի պահովով մեջ է մտնել 1915 թ. հունիսի 1-ին, և նրա լիազորված և պարտավոր են անհապաղ գենքի ուժով ամենախիստ ձևով նրանց խելքի բերել և հարձակումն ու ընդդիմանալը հիմնովին ոչնչացնել:

-Հոդված 2. Բանակների և առանձին գրուարանակների և դիվիզիաների իրամանատարները, ռազմական հատուկ օրենքների վրա հիմնվելով, լրտեսություն կամ դավաճանություն կանխազգալով, կարող են գյուղերի և գյուղաբարձրակների բնակչությանը առանձին-առանձին կամ զանգվածաբար այլ բնակատեղիներ ուղարկել և բնակեցնել:

-Հոդված 3. Սույն օրենքը գործողության մեջ է մտնում իրապարակման օրվանից:

-Հոդված 4. Սույն օրենքի դրույթների գործադրման համար պատասխանատու են գլխավոր իրամանատարնի տեղակալը և ուսազմական նախարարը<sup>67</sup>:

-Բարեհանեցի հրամայել, որ օրինականությունը պահովվելու նպատակով սույն օրենքի տեքստը ներկայացվի ընդհանուր ժողովի նիստում<sup>68</sup>, ժամանակավորապես դրվի գործողության մեջ և հավելվի պետության օրենքներին:

<sup>65</sup> Յ. Գ. Ղազարեամ, նշվ. աշխ., էջ 328:

<sup>66</sup> Սույն տեղում, էջ 69 - 70 և էջ 180 - 181: Լ. Վարդամ, նշվ. աշխ., էջ 117:

<sup>67</sup> Այդ պաշտոնները գրադեցմում եր էնվեր փաշան:

<sup>68</sup> Նկատի ունի օսմանյան խորհրդարանի վերին և ստորին պալատների համատեղ նիստը:

-13 Ոեցեփ 1333, 14 մայիսի 1331<sup>69</sup>

-ՈԵՇԱՐԴ<sup>70</sup>, Սաղրազամ ՄԵԽՄԵԴ Սահիր<sup>71</sup>, գլխավոր հրամանատարի տեղակալ և ռազմական նախարար էնվեր:

Ինչպես արդեն նշել էինք, օրենքը, ըստ նրա հեղինակների, պետք է ծառայեր ցեղասպանության քողարկմանը: Սակայն նրանում առկա դրույթը առ այն, որ «Բանակների և առանձին զորաբանակների և դիվիզիաների հրամանատարները ռազմական հատուկ օրենքների վրա հիմնվելով՝ լրտեսություն կամ դավաճանություն կանխազգալով, կարող են գյուղերի և գյուղաքաղաքների բնակչությանը առանձին-առանձին կամ զանգվածարար այլ բնակատեղիներ ուղարկել և բնակեցնել», բացահայտում է օրենքի հեղինակների ձգուում՝ օգտագործել բանակը Հայոց ցեղասպանությունն իրականացնելու նպատակով: Այս կետը հստակորեն ապացուցում է ցեղասպանության գործմբացի ժամանակ բուրքական զինվորականության լայնածավալ ներգրավվածության փաստը<sup>72</sup>:

Ի մի բերելով վերևում նշված երեք փաստաթղթերի վերլուծության արդյունքները, ընդգծենք, որ դրանք, ըստ էության, հանդիսանում են Հայոց ցեղասպանության միասնական պիտական ծրագիր, որը սկզբում հեղինակել են մի խումբ դեկավար գործիչներ, հետագայում ընդունվել է օսմանյան կառավարության կողմից՝ պահվելով զաղտնի, և հաստատվել է սուրբանի կողմից՝ ստանալով օրենքի տեսք և հրապարակվելով պաշտոնաթերություն: Վերջին երկու փաստաթղթերի ի հայտ գալը պայմանավորված էր Հայոց ցեղասպանության հարցի միջազգայնացնամք և բուրքական կառավարության անդամների փորձերով՝ պահովվել «իրավական իհմնավորում»՝ այդ հանցագործությունը քողարկելու և հետագայում պատասխանատվությունից խուսափելու նպատակով: Իրականում այն պաշտոնական փաստարդերը, որոնք հրատարակվել են Թուրքիայում, անքանչենի միասնություն են կազմում մեր կողմից մատնանշված առաջին փաստարդի՝ «10 պատվիրանների» հետ և ամենայն հստակությամբ հաստատում են Հայոց ցեղասպանության փաստը:

## Summary

### THE STATE PROGRAM OF THE ARMENIAN GENOCIDE The comparative analysis of three Turkish documents

*Ruben A. Safrastyan*

The program of the Armenian genocide implemented by the government of Ottoman Turkey during the World War I has not received all the attention it deserves. Although a number of books exist concerning Armenian genocide, this is the first paper to be devoted solely to problem under discussion.

<sup>69</sup> Համապատասխանում է 1915 թ. մայիսի 27-ին:

<sup>70</sup> Սուլթան ՄԵԽՄԵԴ ՌԵՇԱՐ Վ:

<sup>71</sup> Սաղրազամ ՄԵԽՄԵԴ Սահիր Հալիմ փաշ:

<sup>72</sup> Տե՛ս այդ մասին. V. N. Dadrian, The role of the Turkish military in the destruction of Ottoman Armenians: a study of historical continuities. – Journal of political and military sociology, 1992, Vol.: 20, No. 2 (Winter): p. 257 – 288.

The subjects of the investigation are the following ottoman documents:

- The 10 points action plan to eliminate Armenians under cover of deportation, approved by the secret meeting of five leading members of ottoman government and army headquarter, including interior minister Talaat. This document represents the early stage of preparing the program of genocide;
- Official Decision of ottoman government on the beginning the deportation of Armenian, which unmasks the genocidal intention of Turkish authorities;
- The Deportation Law, which aimed to provide “the legal cover” for the criminal act of Armenian genocide.

Thoughtfully examination of sources allows author to come to conclusion that above-mentioned documents formed the program of the Armenian genocide.